



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

31.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի 14.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 07.08.2017թ. ներկայացրել էր բողոք, որը կազմված էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, 08.08.2017թ. վերադարձրել էր «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 07.08.2017թ. ներկայացրած բողոքը՝ առաջարկելով երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

14.08.2017թ. Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից և սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 26-ին ժամը 10:30-ին կայացած նիստում կայացվել է որոշում այն մասին, որ «Մասնագիտական փորձառություն», «Ֆինանսական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, սակայն գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 27-ին ժամը 16:00-ին կայացած նիստում կայացվել է որոշում «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Կասեցնել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը, մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը:

2. Դադարեցնել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 27.07.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, ինչպես նաև «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումները:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Գևորգ Պռազյանը և Պավել Գաբրիելյանը:

2. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.08.2017թ. թիվ 01/03/524-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի կողմից համայնքի կարիքների համար 20-րդ և 28-րդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել էր գնման ընթացակարգ, ծածկագիր՝ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3»:

Գնման գործընթացի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն, որը սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը: Ջրվեժի համայնքապետարանի 2017 թվականի հուլիսի 26-ի թիվ 01/03.2/436-17 գրությամբ Ընկերությանը ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունները և առաջարկվել է ներկայացնել շտկումներ:

Նշված հարցի վերաբերյալ Ընկերությունը 2017 թվականի հուլիսի 27-ին համայնքապետարան է ներկայացրել գրություն, որով տեղեկացրել է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջների բավարարման նպատակով ընկերությունը հայտնում և հավաստում է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացրած գնային առաջարկից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը»:

Սակայն Ըկերության կողմից նշված տեղեկատվության վերաբերյալ որևէ փաստ և հիմնավորում չի ներկայացվել:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տրված տեղեկանքի համաձայն, ընկերության երեք հաշվետու տարիների ապրանքաշրջանառության ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 880 308 ՀՀ դրամ, մինչդեռ գնային առաջարկը կազմում է 16 150 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 13 458 333 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

Գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ՝

–«Ֆինանսական միջոցներ» չափանիշը չի բավարարել հրավերի պահանջներին, քանի որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել գնային առաջարկից,

–«Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար ներկայացված փաստաթղթերում նմանատիպ՝ էներգետիկ բնագավառում կատարած աշխատանքների ծավալները չեն համապատասխանել հրավերի պահանջներին (հիմնավորումը՝ նախկինում կատարված պայմանագրերը գնահատվում են նմանատիպ, եթե դրանց շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ

ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից):

Հարկ է նշել, որ համայնքապետարանի կողմից հայտարարված գնման ընթացակարգով նախատեսվել է լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերում և հրավերով սահմանվել է քաղաքաշինության բնագավառում էներգետիկ ոլորտի շինարարության իրականացման լիցենզիա: Ընկերության կողմից ներկայացվել են նախկինում կատարված երեք պայմանագրեր, մինչդեռ աշխատանքներից միայն մեկի հրավերով է սահմանվել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա՝ ըստ հետևյալ ոլորտների՝

բնակելի, հասարակական, արտադրական,

էներգետիկ,

հիդրոտեխնիկական, (Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքներ):

Երկրորդ պայմանագրի (Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում), հրավերում էներգետիկ ոլորտի լիցենզիայի առկայության պայման չի նախատեսվել, հետևաբար այդ աշխատանքները նմանատիպ (համանման) համարվել չեն կարող:

Երրորդ պայմանագրով իրականացվել են «Երևանի N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի բազրիքների պատրաստման և տեղադրման աշխատանքները, որը չի կարող դիտվել որպես էներգետիկ ոլորտի աշխատանք:

Ստացվում է, որ «Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միայն մեկ պայմանագիրն է համապատասխանում գնման գործընթացին մասնակցելու հրավերի պայմաններին: Պահանջվող լիցենզիայի սահմաններում՝ երեք ներդիրների առկայությամբ պայմանագրի գինը կազմել է 4 979 964 ՀՀ դրամ, այդ թվում՝ էներգետիկ ոլորտի աշխատանքները՝ 478 232 ՀՀ դրամ:

Խնդրի առնչությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրվել է պարզաբանում առ այն, որ եթե «Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի շրջանակներում որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են ընթացակարգի հրավերով սահմանված լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքների պայմանագրերը, ապա այդ մասով ընկերության հայտը ենթակա չէ մերժման:

Ինչպես նշվեց վերոգրյալում, Ընկերության կողմից ներկայացված միայն մեկ պայմանագիրն է համապատասխանել հրավերի պահանջներին, որը սակայն չի բավարարել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի «Մասնագիտական փորձառություն» չափանիշին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ «Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախատրակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են, հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հոգուտ մասնակցի»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Վերլուծելով վերոգրյալը, մեր դիտարկմամբ օրենսդիրը տարանջատելով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ և ներդիր հասկացությունները, սահմանել է այդ երկու տերմինների միաժամանակյա առկայություն այն տրամաբանությամբ, որպեսզի գործունեության տեսակ հասկացությունը կիրառելիս, գործունեության ենթատեսակը (ըստ լիցենզավորման ենթակա գործունեության ուղղությունների՝ համաձայն ներդիրների) ճիշտ իրացվի, այսինքն, ներդիրի առկայությունը գործունեության տեսակի հետ կիրառելու իմաստն այն է, որ մասնակիցը որակավորման և մասնագիտական չափանիշով համապատասխանի հրավերով պահանջվող չափանիշին, բացի ֆինանսական կամ աշխատանքային ռեսուրսների բավարարման տեսանկյունից նաև ի վիճակի լինի մասնագիտական առումով: Տվյալ դեպքում միմիայն լիցենզիայի առկայությունը կարող է հավաստել մասնագիտական կարողության փաստը:

Այսպիսով գտնում ենք, որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պայմաններին, ուստի խնդրում ենք բողոքարկման խորհրդի որոշում կայացնելիս հաշվի առնել համայնքապետարանի սույն դիրքորոշումը»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Ջրվեժ համայնքի ղեկավար Ռ. Պետրոսյանը և համայնքի լիազորված ներկայացուցիչ Ա. Մարգարյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի 14.08.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.08.2017թ. թիվ 01/03/524-17 գրությունը, «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.07.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3, 27.07.2017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի (շարունակություն) թիվ 3, արձանագրությունները, Ընկերության կողմից 09.08.2017թ. ՀՀ ֆինանսների նախարարություն կատարած հարցումը և ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/27-1/14674-17 գրությամբ հայտնած դիրքորոշումը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանը Ջրվեժ համայնքի 20-րդ և 28-րդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 26.07.2017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը հաստատել է, որ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման մասնակից «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում

որակավորման պահանջներին՝ «Մասնագիտական փորձառություն», «Ֆինանսական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշների մասով:

Միաժամանակ, նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև 2017թ. հուլիսի 27-ը ժամը 16:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Մասնավորապես, հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Մասնագիտական փորձառություն» - ներկայացված փաստաթղթերում նմանատիպ՝ էներգետիկ բնագավառում կատարված աշխատանքների ծավալները չեն համապատասխանում, քանի որ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում էներգետիկ լիցենզիայի շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Հանձնաժողովը 27.07.2017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի «ա» ենթակետով որոշել է Ընկերության հայտը մերժել՝ «Մասնագիտական փորձառություն», «Ֆինանսական միջոցներ» չափանիշները չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է հաջորդաբար տեղ գբաղեցրած մասնակցին՝ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին ներկայացնել որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջ:

«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չտվել է անհամապատասխանությունները, սակայն գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 27-ին ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստում կայացվել է որոշում «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:

Որպես կայացված որոշման հիմնավորում՝ Պատվիրատուն 30.08.2017թ. թիվ 01/03/524-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընկերության հայտով ներկայացված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը չի բավարարել հրավերի պահանջներին, քանի որ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել գնային առաջարկից, ինչպես նաև «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար Ընկերության կողմից նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերով էներգետիկ լիցենզիայի շրջանակներում իրականացված աշխատանքների հանրագումարային ծավալը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջին:

Բողոքի քննության նպատակով 25.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ նախկինում կատարված երեք պայմանագրերից միայն մեկի՝ Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքների գնման պայմանագրի կնքման համար հրավերով սահմանվել է քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա՝ ըստ հետևյալ ոլորտների՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական, մինչդեռ երկրորդ՝ Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման պայմանագրի, և երրորդ՝ «Երևանի N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի բազրիքների պատրաստման և տեղադրման աշխատանքների գնման պայմանագրի կնքման նպատակով հրապարակված հրավերներում էներգետիկ ոլորտի լիցենզիայի առկայության պայման չի նախատեսվել, հետևաբար, այդ աշխատանքները նմանատիպ (համանման) համարվել չեն կարող:

Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով

սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր ընկերությունը հանձնաժողովին է ներկայացրել 02.02.2017թ. կնքված ՀՀ Կտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքների գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 7 440 888 ՀՀ դրամ), ինչպես նաև 07.03.2017թ. կնքված «Հրազդանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ճաշարանի վերանորոգման աշխատանքների գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 4 979 964 ՀՀ դրամ), իսկ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 16 150 000 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող համապատասխանաբար մասնագիտական փորձառություն և ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և

կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար

պահանջվում է հետևյալ լիցենզիան՝ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ էներգետիկ:

Հրավերի 2.5 կետի՝

- 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում էներգետիկ լիցենզիայի շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

- 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը(...):

Որպես Հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթի շտկված տարբերակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ 2016թ. 4-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկը, որի համաձայն Ընկերության ընդամենը շրջանառությունը (համախառն եկամտի ծավալը) հաշվետու ժամանակահատվածում կազմել է 18 880 308 ՀՀ դրամ:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից և նշված որակավորումը համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն նշել է, որ համայնքապետարանի կողմից հայտարարված գնման ընթացակարգով նախատեսվել է լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերում և հրավերով սահմանվել է քաղաքաշինության բնագավառում էներգետիկ ոլորտի շինարարության իրականացման լիցենզիա: Ընկերության կողմից ներկայացվել են նախկինում կատարված երեք պայմանագրեր, մինչդեռ աշխատանքներից միայն Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հաստատված հրավերով է սահմանվել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա՝ ըստ հետևյալ ոլորտների՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական: Մյուս պայմանագրերով՝ համապատասխանաբար Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման և «Երևանի N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի բազրիքների պատրաստման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հաստատված հրավերներով, էներգետիկ ոլորտի լիցենզիայի առկայության պայման չի նախատեսվել, հետևաբար այդ աշխատանքները նմանատիպ (համանման) համարվել չեն կարող:

Խորհուրդն ուսումնասիրել է Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման և Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագրերի ծավալաթերթ-նախահաշիվները, որի արդյունքում պարզվել է, որ Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների պայմանագրի ծավալաթերթ նախահաշվում առկա էներգետիկ բնույթի աշխատանքներն ամբողջովին համանման են Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքների պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում առկա էներգետիկ բնույթի աշխատանքներին, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ դրանք հանդիսանում են հրավերով պահանջվող քաղաքաշինության բնագավառում էներգետիկ ոլորտի շինարարության իրականացման լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքներ:

Խորհուրդը գտնում է նաև, որ Պատվիրատուի այն պնդումը, որ Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հաստատված հրավերով չի պահանջվել էներգետիկ ոլորտի լիցենզիա, ուստի նշված պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ, անհիմն է, քանի որ պատվիրատուի

կողմից ընթացակարգի հրավերով լիցենզավորման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզավորման ենթակա աշխատանքների կատարման համար նախատեսված համապատասխան լիցենզիայի պահանջ չսահմանելը դեռ չի նշանակում, որ նշված աշխատանքները կարող են իրականացվել առանց համապատասխան լիցենզիայի:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, խորհուրդը գտնում է, որ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար Ընկերության կողմից ներկայացված՝ նախկինում կատարված Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման և Քանաքեռավանի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագրերը նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված՝ ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը համապատասխանում է Հրավերի պահանջներին, ուստի Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը անբավարար գնահատելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 61-րդ, 63-րդ և 65-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից 14.08.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 27.07.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «Աշոտ և


Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, ինչպես նաև «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ